

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկ

Տարեկան ֆինանսական հաշվետվություն
2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	
Անկախ աուդիտորի եզրակացություն	38
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	40
Համախմբված հաշվապահական հաշվեկշիռ	41
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	43
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	44
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	47

**Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի
համախմբված ֆինանսական
հաշվետվությունները
2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,
և անկախ աուդիտորի եզրակացությունը**

ԱՆԿԱԽ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Բանկ) և իր դուստր ընկերության՝ կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը

ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի մշակումը, կիրառումը և պահպանումը, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրությունը և կիրառումը, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարումը:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է՝ անցկացված աուդիտի հիման վրա եզրակացություն արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այս ստանդարտները պահանջում են, որպեսզի մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ երաշխիք, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները զերծ են էական խեղաթյուրումներից:

Աուդիտը ներառում է համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացումը: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա՝ ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, սակայն ոչ Բանկի ներքին

վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով:

Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարված հաշվապահական գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր աուդիտորական եզրակացությունն արտահայտելու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ա. Փինարբասի
Տնօրեն/բաժնետեր

Ղ. Հիլլեր
Աուդիտի ղեկավար/բաժնետեր

ք. Երևան
«Գրանթ Թորնթոն Ամիո» ՍՊԸ
16 ապրիլի 2009 թ.



Գրանթ Թորնթոն Ամիո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T +374 10 260 964
F +374 10 260 961
www.gta.am

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Ծանոթագրություն	2008 թվ. 31-ին ավարտված տարվա համար	2007 թվ. 31-ին ավարտված տարվա համար
Տոկոսային եկամուտ	4	9,752,570	14,732,143
Տոկոսային ծախս	5	(8,677,531)	(7,441,031)
Ջուտ տոկոսային եկամուտ		1,075,039	7,291,112
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		365,750	325,327
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(211,095)	(165,628)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս		154,655	159,699
Ջուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	6	(6,653,781)	(52,986,286)
Ջուտ իրացված վնաս վաճառքի համար մատչելի ակտիվների գծով		469	(135,256)
Ջուտ շահույթ՝ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	7	20,187,689	8,335,233
Այլ եկամուտ	8	766,677	515,947
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր		(1,418,725)	(1,173,085)
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(6,348,039)	(5,615,613)
Այլ ծախսեր		(31,604)	(38,337)
Տարվա շահույթ / (վնաս), այդ թվում		7,732,380	(43,646,586)
Մայր կազմակերպության բաժնեմաս		7,691,002	(43,696,872)
Փոքրամասնության բաժնեմաս		41,378	50,286

Ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Համախմբված հաշվապահական հաշվեկշիռ

հազար ՀՀ դրամ

	Ծանոթա- ություն	2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Դրամական միջոցներ		15,441,978	72,430
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	10	77,250,867	183,068,963
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	11	340,237,664	318,671,929
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	15,383	15,564
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	13	44,362,474	47,168,679
Այլ ակտիվներ		78,001	222,321
		477,386,367	549,219,886
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	10	727	5,187
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	14	80,955,087	24,600,695
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	96,649,572	48,844,607
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	12	91,026	134,535
Հիմնական միջոցներ	15	10,763,335	8,477,694
Ոչ նյութական ակտիվներ	16	777,101	411,164
Այլ ակտիվներ	17	1,406,086	947,920
		190,642,934	83,421,802
Ընդամենը ակտիվներ		668,029,301	632,641,688
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	69,788,059	40,040,499
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		1,030,950	688,013
Պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ	13	41,337,306	48,039,741
Այլ փոխառություններ	19	12,440,435	10,274,856
Այլ պարտավորություններ		121,614	65,105
		124,718,364	99,108,214

Համախմբված հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

	Ծանոթագրություն	2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		344,503,231	350,273,664
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	40,268,874	38,302,614
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		103,962,779	93,622,987
Թողարկված պարտքային արժեթղթեր		1,437,498	48,958,097
Պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ	13	43,467,351	44,230,693
Այլ պարտավորություններ	20	1,369,453	1,171,085
		535,009,186	576,559,140
Ընդամենը պարտավորություններ		659,727,550	675,667,354
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	21	100,000	100,000
Գլխավոր պահուստ	21	10,080,539	9,985,956
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	12	85,663,194	42,009,598
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		(163,455)	(108,384)
Կուտակված վնաս		(87,734,461)	(95,328,578)
Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ		7,945,817	(43,341,408)
Փոքրամասնության բաժնեմաս		355,934	315,742
Ընդամենը սեփական կապիտալ		8,301,751	(43,025,666)
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		668,029,301	632,641,688

38-ից 90-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2009 թ. ապրիլի 16-ին ՀՀ ԿՔ խորհրդի կողմից և վերջինիս անունից ստորագրվել:

Ա. ԶԱՎԱԴՅԱՆ
Նախագահ



Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ



Համախմբված հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ						Փոքրամասնության բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
	Թուղթված կապիտալ	Գլխավոր պահուստ	Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ		
Մնացորդը առ 1 հունվարի 2007 թ.	100,000	9,928,286	12,734,237	(249,275)	(51,572,896)	(29,059,648)	266,043	(28,793,605)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	827	-	827	-	827
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ վնաս	-	-	-	140,064	-	140,064	-	140,064
Պահուստի օգտագործում	-	(1,140)	-	-	-	(1,140)	(587)	(1,727)
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված եկամուտ/(ծախս)	-	(1,140)	-	140,891	-	139,751	(587)	139,164
Տարվա շահույթ/(վնաս)	-	-	-	-	(43,696,872)	(43,696,872)	50,286	(43,646,586)
Ընդամենը տարվա եկամուտ և ծախս	-	(1,140)	-	140,891	(43,696,872)	(43,557,121)	49,699	(43,507,422)
ՀՀ Կառավարության ներդրում սեփական կապիտալում (ծանոթ. 12)	-	-	29,275,361	-	-	29,275,361	-	29,275,361
Հատկացումներ պահուստին	-	58,810	-	-	(58,810)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	100,000	9,985,956	42,009,598	(108,384)	(95,328,578)	(43,341,408)	315,742	(43,025,666)
Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	-	-	-	8,059	-	8,059	-	8,059
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ	-	-	-	(63,130)	-	(63,130)	-	(63,130)
Պահուստի օգտագործում	-	(2,302)	-	-	-	(2,302)	(1,186)	(3,488)
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ծախս	-	(2,302)	-	(55,071)	-	(57,373)	(1,186)	(58,559)
Տարվա շահույթ	-	-	-	-	7,691,002	7,691,002	41,378	7,732,380
Ընդամենը տարվա եկամուտ/(ծախս)	-	(2,302)	-	(55,071)	7,691,002	7,633,629	40,192	7,673,821
ՀՀ Կառավարության ներդրում սեփական կապիտալում (ծանոթ. 12)	-	-	43,653,596	-	-	43,653,596	-	43,653,596
Հատկացումներ պահուստին	-	96,885	-	-	(96,885)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	100,000	10,080,539	85,663,194	(163,455)	(87,734,461)	7,945,817	355,934	8,301,751

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար ՀՀ դրամ

Ծանոթագրություն	2008 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար	2007 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Տարվա շահույթ/(վնաս)	7,732,380	(43,646,586)
Մաշվածություն և ամորտիզացիա	843,655	843,276
	8,576,035	(42,803,310)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	131,365,563	96,362,815
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	(21,458,375)	(239,230,978)
ԱՄՀ-ի ակտիվներ	778,972	6,097,319
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	(4,206,260)	20,779,038
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	(56,354,392)	(9,310,392)
Այլ ակտիվներ	(313,846)	(393,962)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	(5,770,433)	123,432,530
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և մնացորդներ	29,403,168	13,242,666
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	(763,342)	(6,073,799)
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	10,682,729	32,571,465
Թողարկված պարտքային արժեթղթեր	(47,520,599)	9,970,261
Այլ պարտավորություններ	2,530,233	178,902
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	46,949,453	4,822,555

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,485,419)	(2,016,777)
Հիմնական միջոցների վաճառք	21,997	18,667
Ներդրումային արժեթղթերի առք	(266,656)	(129,481)
Ներդրումային արժեթղթերի վաճառք	310,164	162,685
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	(3,419,914)	(1,964,906)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Վարկեր KfW-ից	2,165,578	2,231,763
Վարկեր ԱՄՅ-ից	(6,702,435)	(11,447,439)
Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	(4,536,857)	(9,215,676)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	38,992,682	(6,358,027)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	24,700,157	31,058,184
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	63,692,839	24,700,157
24		

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Նախապատմություն

Հիմնական գործունեությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը («Բանկ») Հայաստանի Հանրապետության օրենքով հիմնադրված իրավաբանական անձ է:

Բանկի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 642 (2007 թ.՝ 619):

Բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում, որն իրականացվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն հիմնական խնդրի, Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատուն է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Բանկի դուստր ընկերությունները

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		Հիմնադրման ամսաթիվ
			2008 թ.	2007 թ.	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապե- տություն	Վճարահաշվարկային ծառայություններ	66%	66%	մարտ 2000 թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապե- տություն	Դրամական միջոցների փոխադրումներ	95%	95%	ապրիլ 1998 թ.

Բանկի կողմից ֆինանսական կայունության ապահովմանը ուղղված միջոցառումներ

Բանկը կարևոր դերակատարություն ունի համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա առավել կառավարելի դարձնելու գործում՝ ելնելով հիմնարար խնդրից և պատասխանատվությունից՝ պահպանելու և խրախուսելու Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությունը: Այդ նպատակին հասնելու համար Բանկը ձգտում է կանխարգելել ճգնաժամի անցանկալի ազդեցությունները՝ օգտագործելով իր տրամադրության տակ եղած բոլոր ֆինանսական գործիքները:

Հաշվի առնելով Հայաստանի բանկային համակարգի կապիտալացման և իրազվելիության բարձր մակարդակը՝ 2009թ. մարտի 3-ին Բանկը որոշում կայացրեց արտարժույթի շուկայում սահմանափակել միջամտությունները և վերադառնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Վերջինս հնարավորություն կտա արտարժույթի փոխարժեքները ձևավորելու ներկա մակրոտնտեսական ցուցանիշներին համապատասխան, ինչը զգալիորեն կբարելավի Հայաստանի արտաքին մրցունակությունը:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան, որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Սեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Սեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված կամ պատմական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Բանկի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Դուստր ընկերությունների համախմբում

«Հայինկասացիա» ՓԲԸ դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն համախմբվել Բանկի ֆինանսական հաշվետվություններում, քանի որ համախմբումն էական ազդեցություն չէր ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Սկզբնական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն՝ բացառությամբ «Արմենիան Քարդ» ՓԲԸ դուստր ընկերության համախմբման, ԱՄՀ-ում անդամակցության՝ Հայաստանի Հանրապետության բաժնեմասի և ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող մուրհակի, ինչպես նաև ԱՄՀ-ից ստացված ԱԿՏԱ վարկի գծով պարտավորության վերաբերյալ հաշվապահական հաշվառման փոփոխության, որոնք նկարագրված են ստորև՝ «վերադասակարգում և վերաներկայացում» բաժնում:

Ֆինանսական հաշվետվությունների համախմբում

Դուստր կազմակերպությունները, որոնց նկատմամբ Բանկը կարող է տնօրինել ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի կեսից ավելին կամ այլ կերպ վերահսկում է այդ ընկերության գործունեությունը, համախմբվում են՝ բացառությամբ ոչ էական կազմակերպություններից: Դուստր կազմակերպությունների հաշվետվությունները համախմբվում են, երբ վերահսկումը փոխանցվում է Բանկին և բացառվում են համախմբումից, երբ դադարում է վերահսկելու հնարավորությունը:

Բոլոր ներխմբային գործառնությունները, հաշվարկների մնացորդները կամ չիրացված հասույթը բացառվում են: Բացառվում է նաև չիրացված վնասը, մինչև փոխանցված ակտիվի արժեզրկման վերաբերյալ համոզվածություն ձեռք չի բերվում: Անհրաժեշտության դեպքում, դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունը փոփոխվել է՝ խմբի կողմից ընդունված քաղաքականությանը համապատասխանեցնելու նպատակով:

Ձեռքբերման ժամանակ, դուստր կազմակերպության ակտիվները, պարտավորություններն ու պայմանական պարտավորությունները չափվում են ձեռքբերման օրվա դրությամբ իրական արժեքով: Ձեռքբերման արժեքի և ձեռք բերված զուտ ակտիվների դրական տարբերությունը հաշվառվում է որպես **գուղվիլ**: Եթե ձեռքբերման արժեքը փոքր է ձեռք բերված դուստր կազմակերպության զուտ ակտիվների իրական արժեքից, ապա տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում՝ ձեռքբերման ժամանակաշրջանում: Փոքրամասնության բաժնեմասը հաշվառվում է ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի համապատասխան չափով: Հետագայում, փոքրամասնության բաժնեմասը գերազանցող ցանկացած վնաս վերագրվում է մայր կազմակերպության բաժնեմասին: Մայր ընկերության բաժնետերերին հասանելի բաժնետիրական կապիտալը և փոքրամասնությունը կազմող բաժնետերերին հասանելի զուտ եկամուտը արտացոլվում են առանձին տողերով՝ հաշվեկշռում և ֆինանսական արդյունքների վերաբերյալ հաշվետվությունում:

Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժույթային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի դրամային արժեթղթերի՝ արտարժույթով արտահայտված իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեթղթերի ամորտիզացված գումարների փոփոխության և արժեթղթերի հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Ոչ դրամային հողվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալի վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

	31 դեկտեմբեր 2008	31 դեկտեմբեր 2007
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	306.73	304.22
ՀՀ դրամ/1 եվրո	435.00	446.96
ՀՀ դրամ/1 ՀՓԻ	472.44	480.74

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները և առևտրային բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Հատուկ փոխառության իրավունքով արտահայտված ակտիվները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների **համախմբի** մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ) կամ
- սկզբնական ճանաչման պահին կազմակերպության կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգալիորեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանան, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեն առևտրական նպատակներով պահվող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեն ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեթղթերի տեսքով թողարկված արժեթղթերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական

անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և

- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեթղթերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնց տարբերությունը էականորեն ազդում է դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք) առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատագրված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գործող շուկայում չունեն զնանշված շուկայական գին, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, նրանց, որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ նրանց, որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատագրված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Բանկը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնց Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվներն այնպիսի ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Բանկը դառնում է գործիքի

պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով գործարքի ամսաթվի և վերջնահաշվարկի ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում իրական արժեքի փոփոխությունները էական չեն:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ ստանձնմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Վերջիններս չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի վերադասակարգումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Իրական արժեքի չափման հիմունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը

որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Ձեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են դեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չշրջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ՝

- իրական արժեքով չափվող, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գործիքների խմբում դասակարգված ֆինանսական գործիքների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերություններից շահույթի ու վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է, և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացվելու ժամանակ ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկման միջոցով:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է, կամ երբ Բանկը փոխանցել է

ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերն արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ այլ բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես բանկերից կամ հաճախորդներից ստացվելիք գումարներ: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսագումար և հաշվեգրվում է հակադարձ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է հաշվեկշռում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները՝ կապված սեփականության իրա-

վունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Ձեռք բերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում՝ մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով՝ որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Ձուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն տիրապետողի հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս այն տարում, որի ընթացքում կատարվել են:

Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Մետաղադրամների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և նրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների

սկզբնական գնահատումից, կիսսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում կամ վնասում:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռքբերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	10-ից 20 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	5 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Այլ	5 տարի

Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիայի գծով ծախսը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	3-ից 5 տարի
-----------------------	-------------

Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և չգնանշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտե-

լու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնց հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Արժեզրկումից կորստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառու կամ վարկառուների խումբն ունեն զգալի ֆինանսական դժվարություններ, առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայնության կամ պայմանների խախտումներ:

Նախևառաջ Բանկը գնահատում է, արդյոք գոյություն ունի՞ արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի դա զգալի թե ոչ, ապա այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման դիտարկում և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակվում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, չեն ներառվում արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի՝ ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերություն: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի և Բանկի տրամադրության տակ կան ոչ բավարար տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Բանկը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշ-

վետությունում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությամբ:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ այն հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեք: Օգտագործման արժեքը գնահատելիս, դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինեք առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնա-

դրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերում են:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են՝ զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը, զեղչման միջև հարկումը գործող այն դրույքի կիրառմամբ, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Հարկում

Բանկն ազատված է բոլոր տեսակի հարկերից՝ բացառությամբ ներկրվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության սահմանին գանձվող հարկերից, տուրքերից և մաքսային վճարներից:

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելավճարի կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև այլ տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսային եկամուտը, որը վերաբերում է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառվում է այն շահույթի կազմում, որը ստացվել է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունների վճարները, վարկերի սպասարկման վճարները և այլ վճարները, որոնք հարակից ուղղակի ծախսերի հետ դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է հաճախորդի տրամադրությունը տրամադրելիս:

Վերադասակարգում և վերաներկայացում

ԱՄՅ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցության բաժնեմաս

Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ և միաժամանակ գործում է որպես ԱՄՅ-ի պահառու Հայաստանի Հանրապետությունում: Բանկը գրառումներ է վարում ԱՄՅ-ում անդամակցության Հայաստանի Հանրապետության բաժնեմասի և ԱՄՅ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող մուրհակի վերաբերյալ: Քանի որ Բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջև կնքվել է համաձայնագիր ԱՄՅ-ի հանդեպ պարտավորությունները Բանկին փոխանցելու վերաբերյալ, 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրանք ներառվել են Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվություններում: Հետևաբար, համախմբված հաշվապահական հաշվեկշռի համեմատական տեղեկատվությունը վերաներկայացվել է և 44,228,417 հազ. դրամ գումարով ԱՄՅ-ում Բանկի բաժնեմասը, ինչպես նաև 44,230,693 հազ. դրամ գումարով ԱՄՅ-ի հանդեպ համապատասխան պարտավորությունը ներկայացվել են Ծանոթագրություն 13-ում: Միաժամանակ, ԱՄՅ-ից ստացված ԱԿՏԱ (Աղքատության կրճատման և տնտեսական աճի) վարկի գծով ՀՀ Կառավարության նկատմամբ պարտավորությունը վերաներկայացվել է որպես ԱՄՅ-ի նկատմամբ պարտավորություն՝ ՀՓԻ-ով:

Դուստր ընկերության համախմբում

Ընթացիկ ֆինանսական տարվա ընթացքում Բանկը իր դուստր ընկերության՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունները համախմբել է իր ֆինանսական հաշվետվություններում: Հետևաբար, նախորդ տարվա ֆինանսական տեղեկատվությունը վերաներկայացվել է՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների համախմբման ազդեցությունը հաշվի առնելու նպատակով:

Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Բանկն ընդունել է իր գործունեությանը համապատասխան և 2008 թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի (ՀՄՀ) կողմից:

Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մինչ այժմ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Դեկլարությունը կանխատեսում է, որ նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից հետո առաջիկա ժամանակաշրջանում:

Նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները՝ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս կիրառելի չեն, սակայն հետագայում կիրառելի կլինեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար

Փոփոխություններ ՀՀՍՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (վերանայված 2007 թ.)

Այս ստանդարտում նոր փոփոխությունն ազդում է սեփական կապիտալում սեփականատերերի հետ գործարքների ներկայացման վրա և առաջարկում է ամբողջական եկամուտների մասին հաշվետվությունը: Կազմողները հնարավորություն կունենան ներկայացնել եկամտի և ծախսի հոդվածները և այլ ամբողջական եկամտի հոդվածները կամ մեկ ամբողջական եկամուտների մասին հաշվետվությունում՝ ենթագումարներով, կամ երկու առանձին հաշվետվություններում (առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, որին կհետևի այլ ամբողջական եկամուտների մասին հաշվետվություն): Այս փոփոխությունը չի ազդում Բանկի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա, բայց կառաջացնի լրացուցիչ բացահայտումների անհրաժեշտություն:

ՀՀՍՍ 23 «Փոխառության ծախսումներ» (վերանայված 2007 թ.)

Համաձայն այս փոփոխության փոխառության ծախսումները պետք է կապիտալացվեն, այնքանով, որքանով դրանք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձեռքբերման, արտադրության կամ կառուցման հետ, որոնց նպատակային օգտագործման կամ վաճառքի պատրաստ լինելու համար անհրաժեշտ է ժամանակ: Ներկայումս Բանկի կողմից որդեգրած մոտեցումը՝ անմիջապես ծախս ճանաչել փոխառության ծախսումները, կփոխվի: Համաձայն փոփոխված ստանդարտի անցումային մասի՝ մինչ օրս ծախս ճանաչված փոխառության ծախսումների գծով փոփոխություններ չեն իրականացվելու: Այս փոփոխության հետևանքով հետագա ժամանակաշրջանում Բանկի տոկոսային ծախսը կնվազի, և կաճեն կառուցման մեջ գտնվող որակավորվող ակտիվի գծով կապիտալացվող փոխառության ծախսումները:

Նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները՝ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս կիրառելի չեն և, հավանաբար, հետագայում ևս կիրառելի չեն լինի Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար

ՀՀՍՍ 8 «Գործառնական սեզմենտներ»

Սա բացահայտման ստանդարտ է, որը հանգեցնում է Բանկի հաշվետու սեզմենտների վերաներկայացմանը, բայց չի ունենա որևէ ազդեցություն ֆինանսական արդյունքների կամ վիճակի վրա: Այս ստանդարտի կիրառումը Բանկի համար պարտադիր չէ:

ՀՀՍՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» (վերանայված 2008 թ.)

Այս ստանդարտը կիրառելի է ձեռնարկատիրական գործունեության միավորումների համար, ստեղծված 2009 թ. հուլիսի 1-ին կամ

այդ ամսաթվից հետո հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում: Նոր ստանդարտը ներկայացնում է ձեռնարկատիրական գործունեության միավորումների նկատմամբ հաշվապահական հաշվառման պահանջների փոփոխություններ, բայց, այնուամենայնիվ, պահանջում է գնման մեթոդի կիրառումը:

ՀՀՄՍ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» (վերանայված 2008 թ.)

Վերանայված ստանդարտը ներկայացնում է հաշվապահական հաշվառման պահանջների փոփոխություններ դուստր ընկերության նկատմամբ վերահսկողության կորստի դեպքում և դուստր ընկերություններում Բանկի տոկոսի փոփոխության դեպքում: Ղեկավարությունը չի ակնկալում այս ստանդարտի էական ազդեցություն Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍԿ (IFRIC)13 «Հաճախորդների հավատարմության գծով միջոցառումներ»

Այս մեկնաբանությունը պարզաբանում է, որ երբ ապրանքները կան ծառայությունները վաճառվում են, տրամադրելով հաճախորդի պահպանման խրախուսական միջոցներ (խրախուսական միավորներ կամ անվճար ապրանքներ), գործարքը դիտվում է բազմատարր և հաճախորդի կողմից ստացված համապատասխան հատուցումը բաշխվում է գործարքի տարրերի միջև համամասնորեն՝ կիրառելով իրական արժեքը:

ՀՀՄՍ 2 (փոփոխություն) «Բաժնեմասի վրա հիմնված վճարումներ»

Այս փոփոխությունը վերաբերում է իրավունքի տրամադրման պայմաններին և չեղյալ ճանաչմանը:

Տարեկան բարեփոխումներ 2008

ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկվել է «Միջազգային ֆինանսական հաշվետվությունների Ստանդարտների Բարեփոխումներ 2008»-ը: Բարեփոխումների մեծ մասը կիրառելի են 2009 թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ղեկավարության համոզմամբ՝ բարեփոխումները Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չեն ունենա:

ՀՀՄՍ 5 (փոփոխություն) «Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատվող գործառնություններ» (և համապատասխան փոփոխություն ՀՀՄՍ 1-ի «Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների առաջին անգամ ընդունումը») (ուժի մեջ է 2009 թ. հուլիսի 1-ից):

Փոփոխությունը պարզաբանում է, որ դուստր ընկերությունների բոլոր ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, եթե մասնակի օտարման մտադրությունը հանգեցնում է վերահսկողության կորստի: Համապատասխան բացահայտումներ պետք է ներկայացվեն այդ դուստր ընկերության համար, եթե բավարարում է ընդհատվող գործառնու-

թյան սահմանմանը: ՖՀՄՍ 1-ի համապատասխան փոփոխությունը սահմանում է, որ այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց՝ ՖՀՄՍ-ի անցման ամսաթվից սկսած: Բանկը ՖՀՄՍ 5-ը (փոփոխություն) կկիրառի առաջընթաց՝ մասնակի օտարված դուստր ընկերությունների համար, սկսած 2009 թ. հունիսի 1-ից:

ՀՀՄՍ 23 (փոփոխություն) «Փոխառության ծախսումներ» (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից):

Փոխառության ծախսումների սահմանումը փոփոխվել է, ուստի տոկոսային ծախսերը հաշվարկվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ սահմանված ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտով (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից): Բանկը ՀՀՄՍ 23-ը (փոփոխություն) կկիրառի առաջընթաց՝ կապիտալացնելով փոխառության ծախսումները, սկսած 2009 թ. հունվարի 1-ից:

ՀՀՄՍ 36 (փոփոխություն) «Ակտիվների արժեզրկում» (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից)

Երբ իրական արժեքից հանած վաճառքի ինքնարժեքը հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի հիման վրա, ապա օգտագործման արժեքի հաշվարկի համապատասխան բացահայտումներ պետք է իրականացվեն: Բանկը կկիրառի ՀՀՄՍ 36-ը (փոփոխություն) և, կիրառելիության դեպքում, կներկայացնի արժեզրկման թեստերի նկատմամբ պահանջվող բացահայտումները 2009թ. հունվարի 1-ից:

ՀՀՄՍ 38 (փոփոխություն) «Ոչ նյութական ակտիվներ» (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից)

Կանխավճարը պետք է ճանաչվի այն դեպքում, երբ վճարումը կատարվել է նախապես՝ ապրանքի օգտագործման նկատմամբ իրավունք ձեռք բերելու կամ ծառայություն ստանալու համար:

Ի լրումն, փոփոխության արդյունքում դուրս են եկել «հազվադեպ, եթե երբևէ» բառերը, որը հնարավորություն էր ընձեռում ամորտիզացիայի գծային մեթոդի գործակցից ավելի ցածր գործակցով մեթոդի կիրառումը: Փոփոխությունը ազդեցություն չի ունենա Բանկի գործունեության վրա, քանի որ բոլոր ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով:

ՀՀՄՍ 40 (փոփոխություն) «Ներդրումային գույք» (և համապատասխան փոփոխություն ՀՀՄՍ 16) (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից):

Կառուցման կամ զարգացման ընթացքի մեջ գտնվող գույքը, որը հետագայում օգտագործվելու է որպես ներդրումային գույք, ներառվում է ՀՀՄՍ 40-ի շրջանակներում: Երբ կիրառվում է իրական արժեքի մեթոդը, ապա նմանատիպ գույքը չափվում է իրական արժեքով: Սակայն երբ կառուցման ընթացքում գտնվող ներդրումային գույքի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, ապա գույքը չափվում է սկզբնական արժեքով՝ մինչև կառուցման ավարտի կամ իրական արժեքի արժանահավատ չափման հնարավորության ամսաթվերից առաջնայինի դեպքում: Բանկը կկիրառի ՀՀՄՍ 40-ը (փոփոխություն)՝ սկսած 2009 թ. հունվարի 1-ից:

ՀՀՄՍ 20 (փոփոխություն) «Պետական շնորհների հաշվառումը և պետական օգնության բացահայտումը» (ուժի մեջ է 2009 թ. հունվարի 1-ից):

Կառավարության կողմից շուկայական տոկոսադրույքից ցածր տոկոսադրույքով տրված վարկից օգուտը չափվում է ՀՀՄՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքի և ՀՀՄՍ 20-ին համապատասխան հաշվառված օգուտով ստացված մուտքերի տարբերությամբ: Բանկը կկիրառի ՀՀՄՍ 20-ը (փոփոխություն)՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Տոկոսային եկամուտ՝ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Ժամկետային ավանդներ	5,923,162	11,760,400
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	367,997
Նոստրո հաշիվներ	450,904	826,277
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	151,503	129,291
Այլ եկամուտներ	231,116	3,862
	6,756,685	13,087,827
Տոկոսային եկամուտ՝ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	2,690,118	1,135,033
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	284,448	493,473
Այլ	21,319	15,810
	2,995,885	1,644,316
	9,752,570	14,732,143

5. Տոկոսային ծախս

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Տոկոսային ծախս՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
ԱՄՆ-ից ստացված վարկ	229,313	263,926
Այլ փոխառություններ	95,091	76,618
Այլ պարտավորություններ	102,850	81,866
	427,254	422,410
Տոկոսային ծախս՝ տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,598,909	2,841,829
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	6,481,144	4,039,109
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	76,198	53,798
Այլ պարտավորություններ	94,026	83,885
	8,250,277	7,018,621
	8,677,531	7,441,031

6. Ջուտ վնաս փոխարժեքային տարբերություններից

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ջուտ վնաս դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	6,892,743	54,595,088
Ջուտ շահույթ սփոթ գործարքներից	(238,962)	(1,608,802)
	6,653,781	52,986,286

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված Ջուտ վնասի կազմում ներառված է 403,676 հազար դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից Ջուտ օգուտը իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (2007 թ-ին՝ 36,263,583 հազար դրամ Ջուտ վնաս):

7. Ձուտ շահույթ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ծանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ձուտ շահույթ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը)*	3,033,279	1,334,311
Ձուտ շահույթ սեփական կառավարման ներքո գտնվող օտարերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը)*	16,529,192	7,173,377
Ձուտ շահույթ սեփական կառավարման ներքո գտնվող ֆյուչերսային պայմանագրերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը)*	793,944	-
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ*	(168,726)	(172,455)
	20,187,689	8,335,233

* Տես ծանոթություն 6:

8. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ձուտ եկամուտ դրամագիտական արժեքների վաճառքից	120,006	102,377
Բանկոմատների և POS տերմինալների սպասարկումից հասույթ	52,423	45,295
Քարտերի խորաճնշումից և կողավորումից հասույթ	77,375	62,264
Այլ եկամուտ	516,873	306,011
	766,677	515,947

9. Ընդհանուր վարչական ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	3,591,453	3,115,872
Պահուստների անվտանգություն և սպասարկում	725,145	725,910
Մաշվածություն և ամորտիզացիա	843,655	843,276
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	197,942	217,224
Մասնագիտական ծառայություններ	120,444	141,032
Այլ	869,400	572,299
	6,348,039	5,615,613

10. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Ժամկետային ավանդներ	27,605,700	159,477,087
Նոստրո հաշիվներ	47,343,603	21,695,941
Բանկային ընթացիկ հաշիվներ	12,767	5,602
Հաշվեգրված տոկոսներ ավանդների և նոստրո հաշիվների գծով	50,246	799,642
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	35,259	401,371
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	2,203,292	689,320
	77,250,867	183,068,963
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ տեղական արժույթով		
Բանկային ընթացիկ հաշիվներ	727	5,187

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ուներ տեղաբաշխված միջոցներ 3 բանկերում ու ֆինանսական հաստատություններում, որոնց յուրաքանչյուրի մնացորդները գերազանցում էին բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2008թ. և 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 61,343,569 հազար դրամ և 58,383,610 հազար դրամ:

11. Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ - Գնանշված		
Արտերկրյա արժեթղթեր՝ սեփական կառավարման ներքո	265,983,889	251,676,631
Արժեթղթեր՝ հավատարմագրային կառավարման ներքո	34,852,432	66,738,148
Փողի շուկայի գործիքներ՝ սեփական կառավարման ներքո	38,937,545	-
	339,773,866	318,414,779
Ածանցյալ ֆինանսական գործիքներ - Գնանշված		
Պայմանագրեր արտարժույթով՝ հավատարմագրային կառավարման ներքո	67,642	257,150
Պայմանագրեր արտարժույթով՝ սեփական կառավարման ներքո	396,156	-
	340,237,664	318,671,929

Սկզբնական ճանաչման պահին պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքները Բանկի կողմից նախատեսվել են որպես ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերը իրենցից ներկայացնում են պետական արժեթղթեր՝ 135,402,950 հազ. ՀՀ դրամ գումարով, պետության կողմից ուղղակի/անուղղակի երաշխավորված արժեթղթեր՝ 127,113,696 հազ. ՀՀ դրամ գումարով և վերազգային արժեթղթեր՝ 3,467,243 հազ. ՀՀ դրամ գումարով (2007 թ-ին՝ 251,676,631 հազար դրամ գումարով պետական արժեթղթեր):

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կառավարման ներքո գտնվող 2,213,057 հազ. ՀՀ դրամ (7,215,000 ԱՄՆ դոլար) ընդհանուր գումարով արժեթղթերը փոխատվության են տրամադրվել կանխիկի գրավադրմամբ (տե՛ս ծանոթ. 18):

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերը և ածանցյալ գործիքներն իրենցից ներկայացնում են 28,542,738 հազար դրամ (2007 թ-ին՝ 46,902,724 հազար դրամ) գումարով արտերկրյա կառավարությունների պարտքային արժեթղթեր և արտերկրյա ֆինանսական հաստատությունների արժեթղթեր՝ 6,309,694 հազար դրամ (2007 թ-ին՝ 19,835,424 հազար դրամ) գումարով:

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերը և ածանցյալ գործիքները իրենցից ներկայացնում են օտարերկրյա ֆինանսական հաստատությունների կողմից իրենց հայեցողությամբ կառավարվող ակտիվներ: Բանկի կողմից սահմանվել են ռիսկերին ենթարկվածության սահմանաչափեր և ներդրումային ուղեցույցներ:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	Անվանական արժեք		Իրական արժեք			
	2008	2007	2008		2007	
			Ակտիվ	Պարտավորություն	Ակտիվ	Պարտավորություն
Արտարժույթային ֆորվարդներ	-	47,197,957	-	-	113,699	-
Արտարժույթային ֆյուչերսներ	4,599,015	19,524,259	67,642	-	143,451	-
Ընդամենը	4,599,015	66,722,216	67,642	-	257,150	-

12. Ներդրումային արժեքներ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով		
<i>Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնանշված</i>		
SWIFT	917	1,216
<i>Սեփական կապիտալի ներդրումներ իրական արժեքով – Գնանշված</i>		
MasterCard	14,466	14,348
	15,383	15,564
Վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով		
<i>Պարտքային և հաստատագրված եկամտով գործիքներ</i>		
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեքներ	8,392,637	4,541,268
ՀՀ Կառավարության մուրհակ	85,663,194	42,009,598
	94, 055, 831	46,550,866
<i>Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնանշված</i>		
Ներդրումներ չհամախմբված դուստր ընկերություններում	2,551,000	2,251,000
Այլ ներդրումներ սեփական կապիտալում	42,741	42,741
	2,593,741	2,293,741
Ընդհանուր վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով	96,649,572	48,844,607
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ տեղական արժույթով		
<i>Պարտքային և հաստատագրված եկամտով գործիքներ</i>		
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեքներ	91,026	134,535

85,663,194 հազար դրամ անվանական արժեքով անտոկոս ցպահանջ մուրհակը ՀՀ Կառավարության կողմից թողարկվել է որպես անհատույց ներդրում Բանկում: Մուրհակը թողարկվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սեփական կապիտալի բացասական պահուստները ծածկելու նպատակով: Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորում է դրա իրական արժեքը:

ՀՀ Կառավարության վաճառքի համար մատչելի պարտքային արժեքները չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքների վրա, որպես տվյալ ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի զեղչատոկոս:

Տեղական արժույթով վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքները ներկայացված են սկզբնական արժեքով: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին վկայու-

թյուն տրամադրել նրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ստացվել են տարբեր իրական արժեքներ, ինչը պայմանավորված է դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության անորոշությամբ:

13. Արժույթի միջազգային հիմնադրամ

ԱՄՆ-ին առնչվող ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
ՀՓԻ ԱՄՆ-ում	893,764	2,920,997
Բաժնեմասը ԱՄՆ-ում (անդամակցություն)	43,465,114	44,228,417
Հաշվեգրված տոկոսներ	3,596	19,265
	44,362,474	47,168,679

Բանկն ունի ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվ ԱՄՆ-ում, որն օգտագործվում է ԱՄՆ-ի հետ գործարքներ իրականացնելու նպատակով: Այս ընթացիկ հաշվի համար սահմանված տոկոսադրույքը հաշվարկվում է ՀՓԻ տոկոսադրույքի հիման վրա, որը ստացվում է շաբաթական կտրվածքով՝ որպես ՀՓԻ-ի զամբյուղը կազմող չորս արժույթների դրամային շուկայի եռամսյա ժամկետով գործիքների ընտրված դրույթաչափերի կշռված միջին: 2008 թ-ին դրույթաչափը տարեկան տատանվում էր 0.82%-ից 3.49% (2007 թ-ին՝ տարեկան 3.03%-ից 4.00%):

Համաձայն ԱՄՆ կանոնադրության՝ Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ և միաժամանակ գործում է որպես ԱՄՆ-ի պահառու Հայաստանի Հանրապետությունում: Այդպիսով, Բանկը գրառումներ է վարում ԱՄՆ-ում անդամակցության Հայաստանի Հանրապետության բաժնեմասի և ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող մուրհակի վերաբերյալ:

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՆ-ում անդամակցության համար Հայաստանի Հանրապետության բաժնեմասը կազմում էր ՀՓԻ 92,000,000 (2007 թ-ին՝ ՀՓԻ 92,000,000):

Դրամով պարտավորություններ ԱՄՆ-ի հանդեպ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Արժեթղթերի հաշիվ	45,638,426	49,859,245
ԱՄՆ-ի հանդեպ ՀՀ դրամով պարտավորությունների ճշտման հաշիվ	(2,370,231)	(5,827,924)
Թիվ 1 հաշիվ	196,796	196,796
Թիվ 1 հաշիվ	2,360	2,576
	43,467,351	44,230,693

Թիվ 1 հաշիվը օգտագործվում է ԱՄՅ-ի հետ գործառնությունների իրականացման համար՝ ներառյալ անդամավճարի վճարումը, միջոցների գնումն ու հետ գնումը, փոխառությունների մարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի վաճառքը:

Թիվ 2 հաշիվը օգտագործվում է ԱՄՅ-ի վարչական ծախսերի և մուտքերի արտացոլման համար Հայաստանի Հանրապետության ազգային արժույթի և Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում:

2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՅ-ից ստացված 45,6 միլիարդ դրամի (2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 49,8 միլիարդ դրամի) վարկերը երաշխավորված են Կառավարության կողմից՝ այդ վարկերի դիմաց արժեթղթերի թողարկման միջոցով:

ՀՓԻ-ով պարտավորություններ ԱՄՅ հանդեպ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Վարկեր	41,336,740	48,037,108
Հաշվեգրված տոկոսներ	566	2,633
	41,337,306	48,039,741

ԱՄՅ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է աղքատության նվազեցման և տնտեսական աճի վարկը ՀՓԻ-ով, 15 տարի ժամկետով՝ տարեկան 0.5 տոկոսադրույքով:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ:

2008 թվականի դեկտեմբերի 31-ի և 2007 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՅ-ի նկատմամբ պահանջների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը համապատասխանում է իրական արժեքին:

14. Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Վարկեր տեղական բանկերին՝ KfW բանկի հետ համաձայնագրի շրջանակներում	19,900,451	14,408,075
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	60,724,350	10,188,285
Այլ վարկեր	330,286	4,335
	80,955,087	24,600,695

KfW բանկի հետ պայմանագրի շրջանակներում վարկեր էին տրամադրվել տեղական 12 բանկերի և 2 ֆինանսական կազմակերպությունների, որոնց համար միջինը սահմանվել է տարեկան 5.5% - 8% տոկոսադրույք:

Բանկը որպես գրավ ընդունել է արժեթղթեր՝ հետգնման պայմանագրերով տրամադրված վարկերի համար, որոնք թույլատրվում են վաճառել կամ վերագրավադրել: 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր ունեին 18 տեղական բանկեր (2007 թ.՝ յոթ բանկեր): Այս պայմանագրերի դիմաց գրավադրված էին հետևյալ արժեթղթերը.

հազար ՀՀ դրամ

	2008 Իրական արժեք	2007 Իրական արժեք
ՀՀ Կառավարության պետական գանձապետական պարտատոմսեր	59,148,266	9,380,526
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մուրհակներ	1,172,228	-
Այլ արժեթղթեր	406,153	-
	60,726,647	9,380,526

15. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ

	Հոդ և շենքեր	Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2007 թ.	6,738,625	3,728,577	255,561	1,952,614	12,675,377
Ավելացումներ	1,362,005	456,858	21876	46,577	1887316
Օտարումներ	-	(201,625)	(38,399)	(89,859)	(329,883)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	8,100,630	3,983,810	239,038	1,909,332	14,232,810
Ավելացումներ	2,493,568	445,721	77,271	61,032	3,077,592
Օտարումներ	-	(177,356)	(13,634)	(35,023)	(226,013)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	10,594,198	4,252,175	302,675	1,935,341	17,084,389
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2007 թ.	1,298,989	2,482,672	150,158	1,360,354	5,292,173
Ավելացումներ	234,937	376,509	32,077	130,636	774,159
Օտարումներ	-	(196,806)	(31,481)	(82,929)	(311,216)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	1,298,989	2,482,672	150,158	1,360,354	5,292,173
Ավելացումներ	210,802	426,854	34,372	97,956	769,984
Օտարումներ	-	(158,394)	(12,953)	(32,699)	(204,046)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	1,744,728	2,930,835	172,173	1,473,318	6,321,054
Ջուտ հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի 2007 թ.	5,439,636	1,245,905	105,403	592,260	7,383,204
Առ 31 դեկտեմբերի 2007 թ.	6,566,704	1,321,435	88,284	501,271	8,477,694
Առ 31 դեկտեմբերի 2008 թ.	8,849,470	1,321,340	130,502	462,023	10,763,335

16. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2007 թ.	573,936
Ավելացումներ	128,242
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	702,178
Ավելացումներ	439,636
Օտարումներ	(51,952)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	1,089,862
Մաշվածություն	
Մնացորդը առ 1 հունվարի 2007 թ.	221,897
Ավելացումներ	69,117
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	291,014
Ավելացումներ	73,671
Օտարումներ	(51,924)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	312,761
Զուտ հաշվեկշռային արժեք	
Առ 1 հունվարի 2007 թ.	352,040
Առ 31 դեկտեմբերի 2007 թ.	411,164
Առ 31 դեկտեմբերի 2008 թ.	777,101

17. Այլ ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Դրամագիտական արժեքներ	548,321	323,853
Դեբիտորական պարտքեր	602,828	428,910
Այլ ակտիվներ	254,937	195,157
	1,406,086	947,920

18. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	65,913,621	38,421,297
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ	1,542,305	1,581,315
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	21,481	37,887
Կանխիկ գումարի տեսքով ստացված գրավ	2,310,652	-
	69,788,059	40,040,499
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	40,096,518	37,923,499
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվ	19,331	9,855
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	153,025	369,260
	40,268,874	38,302,614

Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդների և մնացորդների կենտրոնացում

2008 թ. և 2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում միջոցներ էին տեղաբաշխել համապատասխանաբար մեկ և երեք տեղական բանկեր, որոնցից յուրաքանչյուրի մնացորդները կազմում էին բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ընդհանուր ավանդների և մնացորդների մոտ 10%-ը: 2008 թ. և 2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 9,370,514 հազար դրամ և 27,104,758 հազար դրամ:

19. Այլ փոխառություններ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Վարկեր KfW բանկից	12,440,126	10,274,542
Հաշվեգրված տոկոսներ	309	314
	12,440,435	10,274,856

Բանկին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակ-

ներում, որի նպատակը հատուկ վարկային ծրագրերի ֆինանսավորումն է՝ տեղական բանկերի միջոցով (տե՛ս ծանոթ. 14): Վարկերը ենթակա են մարման 2008 թ-ից 2043 թ. ընկած ժամանակաշրջանում: Վարկի օգտագործված մասի գծով վճարվում է տարեկան 0.75% տոկոսադրույք, իսկ չօգտագործված մասի գծով՝ 0.25% տոկոսադրույք: Վարկերի մարումը KfW-ին երաշխավորվում է ՀՀ Կառավարության կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2007 թ. նույնպես):

20. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	696,579	828,284
Այլ պարտավորություններ	672,874	342,801
	1,369,453	1,171,085

21. Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

Բանկի կողմից թողարկված կապիտալը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, վաճառվել կամ օտարվել:

Լրացուցիչ կանոնադրական կապիտալ

Լրացուցիչ կանոնադրական կապիտալը մուրհակի տեսքով ՀՀ Կառավարության կողմից կատարված ներդրում է (տե՛ս ծանոթ. 12):

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ձևավորվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: 2008 և 2007 թթ. պահուստի օգտագործումը պայմանավորված է դուստր ընկերության գործունեությամբ:

22. Պայմանական պարտավորվածություններ

Կապիտալ բնույթի պարտավորվածություններ

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի գծով պարտավորվածությունները, որոնք վերաբերում են Բանկի շենքերի շինարարությանը, կազմում են 7,866,167 հազար ՀՀ դրամ (2007 թ.՝ 659,503 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Բանկի ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Երաշխիքներ

2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված երաշխիքները՝ 658,000 հազար դրամ գումարով, տրվել էին 1994 - 1995 թթ. ընկած ժամանակաշրջանում շինարարական ընկերությունների անունից՝ երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Բանկը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտականությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի:

23. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում ներառված ընդհանուր վարձատրությունը (տես ծանոթ. 9):

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ղեկավար անձնակազմի ներառյալ Բանկի խորհրդի անդամները	172,130	147,505

Ստորև ներկայացված են 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2008 (հազար դրամ)	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2007 (հազար դրամ)	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
Վարկեր	40,558	5%	-	-
Պարտավորություններ				
Ավանդներ	60,868	12%	244,647	12%
Պարտավորություններ աշխատավարձի գծով	14,409	-	4,053	-

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային ծախս	9,965	23,619
Տոկոսային եկամուտ	1,341	-

Գործարքներ դուստր ընկերությունների հետ

Դուստր ընկերությունների հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Ընդհանուր վարչական ծախսեր	602,750	610,255

Գործարքներ ՀՀ Կառավարության հետ

Ստորև ներկայացված են 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարության հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույթները:

	2008 (հազար դրամ)	Միջին արդյունավետ տոկոսադրույթ	2007 (հազար դրամ)	Միջին արդյունավետ տոկոսադրույթ
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթեր (ծանոթագրություն 12)	8,483,663	5%	4,675,803	4.34%
Որպես լրացուցիչ կանոնադրական կապիտալ ՀՀ Կառավարության կողմից Բանկի համար թողարկված մուրհակից (ծանոթագրություն 12)	85,663,194	-	42,009,598	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (տեղական արժույթով)	103,962,779	7.5%	93,622,987	5%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (այլ արժույթով)	1,030,950	-	688,013	-

ՀՀ Կառավարության հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթերի գծով	245,069	344,584
Տոկոսային եկամուտ՝ որպես լրացուցիչ կանոնադրական կապիտալ ՀՀ Կառավարության կողմից Բանկի համար թողարկված մուրհակի գծով	248,405	320,973
Զուտ շահույթ սփոթ գործարքներից	273,166	(2,299,807)
ՀՀ Կառավարության հանդեպ այլ պարտավորությունների գծով վճարված տոկոսներ	(263,922)	(345,127)

24. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում տարեկան դրամային արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած էին հետևյալ հոդվածներից.

հազար ՀՀ դրամ

	2008	2007
Դրամական միջոցներ	15,441,978	72,430
Նոստրո հաշիվներ (ծանոթ.10)	47,357,097	21,706,730
ՀՓԻ ԱՄՀ-ում (ծանոթ.13)	893,764	2,920,997
	63,692,839	24,700,157

25. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկի գնահատմամբ՝ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված գործիքների իրական արժեքի, էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերում պահվող վաճառքի համար մատչելի ակտիվների, հաշվարկվում են կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկական դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 12-ում, 2,593,741 հազար դրամ (2007 թ-ին՝ 2,293,741 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով սեփական կապիտալի չզնանշված արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէր որոշել:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ժամանակ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

26. Ռիսկերի կառավարում

ՀՀ միջազգային պահուստների կառավարման գործընթացը ենթարկվում է տարատեսակ ֆինանսական ռիսկերի, և ռիսկերի կառավարման գործառույթը ներառում է այդ ռիսկերի կամ դրանց որոշ համակցության վերլուծությունը, գնահատումը և կառավարումը: Ռիսկերի կառավարման նպատակն է հասնել ռիսկ/եկամտաբերություն ընդունելի համակցության նվազագույնի հասցնելով հնարավոր բացասական ազդեցությունները Բանկի միջազգային պահուստների կառավարման ֆինանսական կատարողականի վրա:

ՀՀ միջազգային պահուստները բաղկացած են արտարժութային միջոցներից և Արժույթի միջազգային հիմնադրամի Փոխառության հատուկ իրավունքից: Պահուստներն արտացոլվում են Բանկի հաշվեկշռում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Բանկի խորհրդի կողմից հաստատվող միջազգային պահուստների ռազմավարական տեղաբաշխման ներքո:

Ներկայումս Բանկում գործում է միջազգային պահուստների կառավարման եռաստիճան համակարգ, որը թույլ է տալիս կառավարել երկարաժամկետ (ռազմավարական), միջնաժամկետ (մարտավարական) և կարճաժամկետ նպատակների իրագործումը:

Ընդ որում՝

- Վերին մակարդակը Բանկի խորհուրդն է, որը, պահուստներ ունենալու հիմնական նպատակներին համապատասխան, ընդունում է ռազմավարական որոշումներ՝ առաջնորդվելով ակտիվների ռազմավարական տեղաբաշխման (ԱՌՏ) հայեցակարգով: ԱՌՏ-ի հիմքում պահուստների հիմնական նպատակներն են: Համաձայն նպատակների պահուստները բաժանվում են համապատասխան պայուսակների (տրանշների) և յուրաքանչյուր պայուսակի համար սահմանվում են կառավարման ձևը՝ ակտիվ կամ պասիվ, ներդրումային հորիզոնը և ֆինանսական ռիսկերի նկատմամբ հանդուրժողականության աստիճանն արտացոլող սկզբունքները:

- Միջին մակարդակը Ներդրումային հանձնաժողովն է, որը, որպես Բանկի խորհրդի կողմից պատվիրակված գործադիր մարմին, պատասխանատու է ներդրումային մարտավարական որոշումների ընդունման համար և հաստատում է պահուստների՝ ըստ նպատակների տարբերակված տրանշների ուղենշային պայուսակները: Գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Բանկի խորհրդին կիսամյակային կտրվածքով:
- Կառավարման ստորին մակարդակը՝ պայուսակի կառավարիչներն են, որոնք իրականացնում են պահուստների կառավարումը՝ ուղենշային պայուսակով հաստատված սահմանաչափերի և ներդրումային կանոնների շրջանակներում: Հաշվետու է ներդրումային հանձնաժողովին: Ընդ որում, ռիսկերի կառավարումն իրականացվում է առանձնացված ստորաբաժանման կողմից, որի պարտականությունների մեջ է մտնում հնարավոր բոլոր ռիսկերի բացահայտումը, դրանց գնահատումը և կառավարումը, ինչպես նաև Բանկի խորհրդի և ներդրումային հանձնաժողովի կողմից հաստատված սահմանաչափերի հսկումը, կառավարման կատարողականի վերաբերյալ հաշվետվելիությունը:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկի կառավարումը ենթադրում է վարկային սահմանափակումների մշակում, մասնավորապես՝ երկրի ռիսկի գնահատում, առանձին գործընկերների և թողարկողների համար նվազագույն ընդունելի վարկանիշի սահմանում ըստ գործընկերների և թողարկողների և ակտիվների տեսակների, ինչպես նաև ավանդների ժամկետայնությունների լիմիտների սահմանում, ածանցյալների հետ կապված ռիսկերի գնահատում: Բոլոր այս միջոցառումներն ուղղված են պաշտպանելու Բանկի շահերը գործընկերների անվճարունակության դեպքերում, կամ դրա վտանգի պարագայում՝ ֆինանսական ակտիվների գնային տատանումներից:

Բանկը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշեր պետական, պետական գործակալությունների, այլ պաշտոնական մարմինների և վերազգային կազմակերպությունների արժեթղթերի թողարկողների կամ թողարկումների համար, որոնց երկարաժամկետ վարկանիշը չի կարող AA- (S&P)/Aa3 (Moody's)-ից ցածր լինել, իսկ կարճաժամկետ վարկանիշը՝ A1+(S&P)/P1(Moody's)-ից:

Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց երաշխիքի կամ այլ վարկային ապահովման

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2008 և 2007 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ վարկային ռիսկի ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու: Հաշվեկշռային ակտիվների համար վարկային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Համախառն առավելագույն ռիսկի չափ 2007 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	10	77,251,594	183,074,150
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	11	340,237,664	318,671,929
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	14	80,955,087	24,600,695
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	96,664,955	48,860,171
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	12	91,026	134,535
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	13	44,362,474	47,168,679
ԸՆդամենը վարկային ռիսկ		639,562,800	622,510,159

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, վերևում ներկայացված գումարները ցույց են տալիս ընթացիկ ռիսկը, բայց ոչ՝ առավելագույնը, որը կարող է առաջանալ ապագայում՝ իրական արժեքների փոփոխություններից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկի կառավարման գործընթացը Բանկում նախևառաջ ենթադրում է պահուստների ընդհանուր պայուսակի տարբերակումը մի քանի պայուսակների՝ առաջնորդվելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակով:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները և խմբավորելով իրացվելիության պահանջ առաջացնող գործոններն ըստ հրատապության՝ ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջինժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա երրորդի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Բանկի խորհրդի կողմից սահմանվում են յուրաքանչյուր պայուսակի թույլատրելի գործիքակազմը՝ ելնելով դրանց իրացվելիության մակարդակից: Ներդրումային հանձնաժողովի կողմից սահմանվում են յուրաքանչյուր պայուսակի նվազագույն և առավելագույն ծավալները՝ հաշվի առնելով նախապես գնահատված կարճաժամկետ և միջինժամկետ իրացվելիության պահանջի ծավալները, ինչպես

նաև յուրաքանչյուր պայուսակում պարտադիր առկա առավել իրացվելի միջոցների նվազագույն տեսակարար կշիռները:

Շուկայական ռիսկ

Բանկում միջազգային պահուստների գործիքակազմի տեսակարար կշիռներն ընտրվում են հետևյալ մեթոդաբանությամբ: Սպասվող եկամտաբերության և տատանողականության գնահատման համար օգտագործվում են համապատասխան եկամտաբերության կորերի երկար ժամանակային շարքեր (1986 թ-ից մինչև այժմ հասանելի տվյալներ)՝ ամսական հաճախականությամբ: Հաջորդ քայլով Նելսոն-Սիգելի մոդելի միջոցով մոտարկվում է եկամտաբերության կորը, որի նպատակը գնահատվող պարամետրերի քանակի կրճատումն է: Վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի միջոցով իրականացվում է եկամտաբերության կորերի սիմուլյացիա, որի հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր սցենարի դեպքում եկամտաբերությունը տվյալ ժամկետայնության համար: Տարբեր սցենարների դեպքում ստացվող եկամտաբերությունների հիման վրա հաշվարկվում է յուրաքանչյուր ժամկետայնության համար սպասվող եկամտաբերությունը և վերջինիս տատանողականությունը: Վստահության միջակայքի ընտրությունը ըստ էության պատասխանում է այն հարցին, թե սխալվելու ինչպիսի հավանականությունն է ընդունելի: Վստահության միջակայքը ընտրված է 95%, որը նշանակում է 5% սխալվելու հավանականություն: Սահմանվում է նաև եկամտաբերության նվազագույն մակարդակը: Ավանդների և արժեթղթերի տեսակարար կշիռները ընտրվում են սպասվող եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով, սակայն պայմանով, որ 95% հավանականությամբ եկամտաբերության մակարդակը պետք է բարձր լինի նվազագույն շեմից:

Արժուքային ռիսկը կառավարվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված՝ յուրաքանչյուր պայուսակում արժուքակազմի սահմանման սկզբունքների համաձայն: Մասնավորապես, արժուքակազմի միջին կշիռները սահմանվում են Ներդրումային հանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքի, ընթացիկ վճարումների, առևտրային բանկերի արտարժույթով պարտադիր պահուստավորման և կանխատեսվող ինտերվենցիաների՝ ընթացիկ տարվա համար գնահատված եռամսյա ներմուծման արժույթային կառուցվածքների նմանական սկզբունքով: Յուրաքանչյուր արժույթի համար տատանվում են առավելագույն և նվազագույն միջակայքերը՝ հաշվի առնելով արժույթային փոխարժեքների տատանողականությունը և հնարավոր հոսքերը:

Ստորև ներկայացված են այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների ու պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկվում է արտարժույթի՝ ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի

փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում տոկոս	2008		2007	
		Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	+20%	53,215,814	53,215,814	67,504,965	67,504.965
ԱՄՆ դոլար	-20%	(53,215,814)	(53,215,814)	(67,504.965)	(67,504.965)

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Բանկի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 31.12.08 թ. դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի ժամկետների: Կապիտալ ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	Փոփոխություններ բազիսային կետով	2008		2007	
		Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Մինչև 1 տարի	1 տարուց ավելի
ՀՀ դրամ	+25	(731)	(122,603)	(998)	(40,720)
ՀՀ դրամ	-25	680	135,811	1,002	38,429

Ստորև ներկայացված է Բանկի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվում է վերագնահատելով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում 31.12.08 թ. դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները:

Արժույթ	Փոփոխություններ բազիսային կետով	2008	2007
		Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը
Արտարժույթ	+25	(1,156,372)	(795,535)
Արտարժույթ	-25	1,156,372	795,535

27. Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Աղյուսակում ներկայացված են 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տոկոսակիր ակտիվներն ու պարտավորությունները և վերջիններիս համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	Արժեք (հազար դրամ)	2008 թ. միջին արդյունավետ տոկոսադրույք	Արժեք (հազար դրամ)	2007 թ. միջին արդյունավետ տոկոսադրույք
ՏՈԿՈՍԱԿԻՐ ԱԿՏԻՎՆԵՐ				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ				
<i>Նոստրո հաշիվներ</i>				
- ԱՄՆ դոլար	27,352,214	1.5%	13,430,395	4.8%
- Եվրո	16,513,701	3.6%	7,569,134	3.7%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	5,625,615	4.5%	648,998	4.5%
- այլ արժույթներ	125,179	0.0%	64,387	0.0%
- ՀՀ դրամ	727	0.0%	5,187	0.0%
<i>Ավանդներ և այլ մնացորդներ օտարերկրյա բանկերում</i>				
- ԱՄՆ դոլար	27,634,158	7.3%	97,659,737	5.35%
- Եվրո	-	-	17,710,922	3.96%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	-	-	38,291,120	6.4%
- այլ արժույթներ	-	-	7,694,270	6.5%
	77,251,594		183,074,150	
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում				
<i>Արտերկրյա կառավարությունների արժեթղթեր՝ սեփական կառավարման ներքո</i>				
- ԱՄՆ դոլար	203,544,052	3.0%	192,833,543	4.2%
- Եվրո	62,439,837	3.9%	58,229,059	3.63%

Արժեթղթեր՝ հավատարմագրային կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	34,920,073	2.50%	41,733,403	4.3%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	-	-	2,302,101	5.12%
- եվրո	-	-	9,973,218	3.86%
- Ճապոնական իեն	-	-	9,879,332	0.47%
- այլ արժույթներ	-	-	3,721,273	5.1%
Պայմանագրեր՝ սեփական կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	396,156	0.82%	-	-
Փողի շուկայի գործիքներ				
- ԱՄՆ դոլար	19,114,009	1.5%	-	-
- եվրո	5,580,250	3.0%	-	-
- անգլիական ֆունտ ստեռլինգ	14,243,287	2.3%	-	-
	340,237,664		318,671,929	
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր				
- ՀՀ դրամ	80,955,087	7.50%	24,600,695	6.5%
Վաճառքի համար մատչելի ակտիվներ				
- ՀՀ դրամ	85,663,194	0.0%	42,009,598	0.0%
- ՀՀ դրամ	8,392,637	5%	4,541,268	4.7%
- ՀՀ դրամ (ներդրումներ սեփական կապիտալում)	2,593,741	0.0%	2,293,741	0.0%
- ԱՄՆ դոլար	14,466	0.0%	14,348	0.0%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	-	-	-	-
- եվրո (ներդրումներ սեփական կապիտալում)	917	0.0%	1,216	0.0%
	96,664,955		48,860,171	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ				
- ՀՓԻ	91,026	6.3%	134,535	6.3%
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ				
- ՀՓԻ	44,362,474	2.5%	47,168,679	4%
ՏՈԿՈՍԱԿԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ				
<i>Տեղական բանկերի ավանդներ</i>				
- ՀՀ դրամ	-	-	-	-

<i>Լորո հաշիվներ տեղական բանկերում</i>				
- ՀՀ դրամ	38,518,764	0.0%	37,445,015	0.0%
- այլ արժույթներ	65,913,621	0.0%	38,421,297	0.0%
<i>Այլ ժամկետային ավանդներ</i>				
- Եվրո	1,542,305	5%	1,581,315	4.6%
- ՀՀ դրամ	-	-	-	-
<i>Այլ հաշիվներ</i>				
- ՀՀ դրամ	1,750,110	0.0%	857,600	0.0%
- այլ արժույթներ	2,332,133	0.0%	37,886	0.0%
	110,056,933		78,343,113	
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ				
- ՀՀ դրամ	103,962,779	7.5%	93,622,987	5%
- ԱՄՆ դոլար	1,030,950	0.0%	688,013	0.0%
	104,993,729		94,311,000	
Պարտավորություններ ԱՄՀ հանդեպ				
- ՀՓԻ	41,337,306	0.50%	48,039,741	0.50%
- ՀՀ դրամ	43,467,351	0.0%	44,230,693	0.0%
Այլ փոխառություններ				
- Եվրո	12,440,435	0.75%	10,274,856	0.75%
Թողարկված պարտքային արժեթղթեր				
- ՀՀ դրամ	1,437,498	7.0%	48,958,097	6.5%
Այլ պարտավորություններ				
<i>Ցպահանջ ավանդներ</i>				
- ՀՀ դրամ	696,579	12%	828,284	12%
<i>Այլ պարտավորություններ</i>				
- ՀՀ դրամ	672,874	0.0%	342,801	0.0%
- այլ արժույթներ	121,614	0.0%	65,105	0.0%
	1,491,067		1,236,190	

28. Ժամկետայնության վերլուծություն

Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը՝ 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Քանի որ Բանկի ֆինանսական գործիքների մեծ մասն ունի հաստատագրված դրույքներ, պայմանագրային մարման ժամկետները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման անսաթվերը:

հազար ՀՀ դրամ

	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ամփամբ	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	15,441,978	-	-	-	-	-	15,441,978
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	58,046,509	11,524,054	7,681,031	-	-	-	77,251,594
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	38,937,545	2,251,239	30,045,154	267,954,699	1,049,027	-	340,237,664
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	61,336,116	600,900	3,670,887	13,040,724	2,306,460	-	80,955,087
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	-	-	86,727,429	100,107	7,228,295	2,609,124	96,664,955
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	71,897	-	19,129	-	-	-	91,026
ԱՄՆ-ում տեղաբաշխված միջոցներ	897,360	-	-	-	43,465,114	-	44,362,474
Այլ ակտիվներ	1,484,087	-	-	-	-	-	1,484,087
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	176,215,492	14,376,193	128,143,630	281,095,530	54,048,896	2,609,124	656,488,865
Պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղա- դրամներ շրջանառության մեջ	-	-	-	-	-	344,503,231	344,503,231
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	108,497,615	17,013	1,542,305	-	-	-	110,056,933
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	-	-	-	-	-	-
Պարտավորություններ ՀՀ Կառա- վարության հանդեպ	104,993,729	-	-	-	-	-	104,993,729
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,437,498	-	-	-	-	-	1,437,498
ԱՄՆ	43,467,351	-	7,174,672	25,695,441	8,467,193	-	84,804,657
Այլ փոխառություններ	-	-	310	-	12,440,125	-	12,440,435
Այլ պարտավորություններ	1,491,067	-	-	-	-	-	1,491,067
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	259,887,260	17,013	8,717,287	25,695,441	20,907,318	344,503,231	659,727,550
Ձուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	(83,671,768)	14,359,180	119,426,343	255,400,089	33,141,578	(341,894,107)	(3,238,685)
Ձուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	(110,168,950)	49,027,587	63,185,064	265,877,155	28,128,979	(347,964,359)	(51,914,524)

29. Արժույթային զանքային

Աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների՝ 2008 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Անգլիական ֆունտ ստեռլինգ
Ակտիվներ				
Դրամական միջոցներ	-	15,416,390	25,504	12
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	727	54,986,187	16,513,701	5,625,615
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	257,974,291	68,020,087	14,243,286
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	80,955,087	-	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	96,649,572	14,466	917	-
Մինչև մարման ժամկետ պահվող ակտիվներ	91,026	-	-	-
ԱՄՅ-ում տեղաբաշխված միջոցներ	-	-	-	-
Հիմնական միջոցներ	10,763,335	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	777,101	-	-	-
Այլ ակտիվներ	1,406,086	67,561	10,440	-
Ընդամենը ակտիվներ	190,642,934	328,458,895	84,570,649	19,868,913
Պարտավորություններ				
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	344,503,231	-	-	-
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	40,268,874	61,225,456	8,562,581	21
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	103,962,780	1,007,602	23,316	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,437,498	-	-	-
ԱՄՅ	43,467,351	-	-	-
Այլ փոխառություններ	-	-	12,440,435	-
Այլ պարտավորություններ	1,369,453	119,718	1,896	-
Ընդամենը պարտավորություններ	535,009,187	62,352,776	21,028,228	21
Զուտ հաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	(344,366,253)	266,106,119	63,542,421	19,868,892
Զուտ արտահաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	-	-	-	-
Զուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2008 թ.	(344,366,253)	266,106,119	63,542,421	19,868,892
Զուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2007 թ.	(493,137,339)	338,153,797	66,118,037	39,003,394

հազար ՀՀ դրամ

ճապոնական իեն	ՀՓԻ	ՌԴ ռուբլի	Այլ արժույթներ	Ընդամենը
-	-	-	72	15,441,978
59	-	31,710	93,595	77,251,594
-	-	-	-	340,237,664
-	-	-	-	80,955,087
-	-	-	-	96,664,955
-	-	-	-	91,026
-	44,362,474	-	-	44,362,474
-	-	-	-	10,763,335
-	-	-	-	777,101
-	-	-	-	1,484,087
59	44,362,474	31,710	93,667	668,029,301
-	-	-	-	-
-	-	-	-	344,503,231
-	-	1	-	110,056,933
-	-	24	7	104,993,729
-	-	-	-	1,437,498
-	41,337,306	-	-	84,804,657
-	-	-	-	12,440,435
-	-	-	-	1,491,067
-	41,337,306	25	7	659,727,550
59	3,025,168	31,685	93,660	8,301,751
-	-	-	-	-
59	3,025,168	31,685	93,660	8,301,751
(364,688)	(871,063)	7,722,957	349,239	(43,025,666)

30. Հետհաշվեկշռային իրադարձություններ

Արժույթի միջազգային հիմնադրամի Գործադիր խորհուրդը 2009թ. մարտի 6-ին հաստատել է 28 ամիս տևողությամբ՝ 368,000 հազար ՀՓԻ-ի օժանդակության վարկային ծրագիր, որը միտված է գլոբալ ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը, ազգային արժույթի և ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության վերականգնմանը և կարիքավոր խավերի պաշտպանությանը: Ծրագրի հաստատման արդյունքում Հայաստանին անմիջապես հատկացվելու է 161,500 հազ. ՀՓԻ, իսկ վարկի մնացած գումարը կտրամադրվի 9 մասնավճարներով՝ ըստ եռամսյակային դիտարկումների:

2009 թ. մարտի 3-ին Բանկը որոշում կայացրեց սահմանափակել արտարժույթի շուկայում միջամտությունները և վերադառնալ լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Այս փոփոխությունը (ՀՀ դրամը արժեզրկվեց ԱՄՆ դոլարի նկատմամբ 21.7%՝ մեկ օրվա ընթացքում) դրական ազդեցություն ունեցավ Բանկի 2009 թ. ֆինանսական վիճակի վրա, քանի որ Բանկի միջազգային պահուստները պահվում են արտարժույթով:

2009 թ. ապրիլի 16-ին ձևավորվել էին հետևյալ փոխարժեքները

ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	375.54	
ՀՀ դրամ/1 եվրո	497.63	
ՀՀ դրամ/1 ՀՓԻ	549.84	